



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

Մայիս 2014թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը, ի դեմս նախարար Հրանուշ Հակոբյանի, մի կողմից և «Համագային» հայ կրթական և մշակութային միությունը, ի դեմս միության կենտրոնական վարչության ատենապետ Վաչե Փափազյանի, մյուս կողմից (այսուհետ՝ կողմեր), կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը, Հայրենիք-Սփյուռք գործակցությունում գիտական, կրթական, հրատարակչական և մշակութային կապերի ամրապնդման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր հետևյալի մասին.


1. Մշակել և համատեղ իրականացնել կրթական, մշակութային և այլ ծրագրեր ու ձեռնարկներ Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում:
2. Կազմակերպել և համատեղ իրականացնել հայապահպանությանը նպաստող մրցույթներ, փառատոներ, ցուցահանդեսներ, հավաքներ Հայաստանում և տարբեր հայաշատ համայնքներում:
3. Համատեղ իրականացնել հրատարակչական աշխատանքներ և կազմակերպել համատեղ հրատարակված նյութերի առաքում սփյուռքյան համայնքներ:
4. Կազմակերպել երիտասարդության հայրենաճանաչության ծրագրեր, այցեր Հայաստան:
5. Մշակել և իրականացնել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող համագործակցության այլ ուղղություններ:
6. Կողմերից որևէ մեկի առաջարկած համագործակցության յուրաքանչյուր ծրագիր, ձեռնարկ քննարկել և իրականացնելուց առաջ ստանալ մյուս կողմի սկզբունքային համաձայնությունը:

7. Սույն համագործակցության հուշագիրը կազմված է երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

8. Սույն համագործակցության հուշագրում ցանկացած լրացում կամ փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում առանձին արձանագրության տեսքով, որը կազմում է սույն համագործակցության հուշագրի անբաժանելի մասը:

9. Սույն համագործակցության հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐ



ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՒՅԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ
ՎԱՉԵ ՓԱՓԱԶՅԱՆ

